# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

## 13.09.2017թ. կնքված N «ՀՀ ՖՆ-ԲՄԾՁԲ-17/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ծրագրային ապահովման մշակման ծառայությունների մատուցման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք.Երևան <<11>> դեկտեմբեր 2017թ

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի դեմս ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավար Է. Գևորգյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Պատվիրատու>>, մի կողմից, և «Ավռոմիկ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Օհանյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և 13.09.2017թ կնքված N «ՀՀ ՖՆ-ԲՄԾՁԲ-17/1» գնման պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ 7.5 կետով, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով՝ կողմերը **որոշեցին**

1.1 Պայմանագրի 4.1 կետով սահմանված <23900000 (քսաներեք միլիոն ինը հարյուր հազար)> բառերը փոխարինել <26280000 (քսանվեց միլիոն երկու հարյուր ութսուն հազար)> բառերով:

1.2 Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը լրացնել հետևյալ խմբագրությամբ՝

Էլեկտրոնային աճուրդի միջոցով կազմակերպվող պետական գնումների ժամանակ գնման հրավեր-հայտարարությունների ստեղծման գործընթացի ավտոմատացման համար անհրաժեշտ է, որ համակարգում բեռնված լինեն հրավեր-հայտարարությունների օրինակելի ձևերը՝ ըստ գնման առարկայի, նախահաշվային գնի և այլ չափանիշների: Պատվիրատուի օգտատերը (գնումների համակարգող, հանձնաժողովի քարտուղար) պետք է հնարավորություն ունենա նախ համակարգի միջոցով լրացնել հրավերի մասին ողջ դինամիկ տեղեկատվությունը՝ որակավորման պահանջվող չափանիշները՝ կախված հրավերի ձևից, տեխնիկական նկարագրերը և այլն: Տեղեկատվության մուտքագրման ցանկացած փուլում պատվիրատուի օգտատերը պետք է կարողանա նախադիտել հրավեր-հայտարարությունը՝ համաձայն իր կողմից արդեն մուտքագրված տեղեկատվության: Մրցույթի գնման առարկան, չափաբաժինները և այլ հիմնական տեղեկատվությունը ստացվում է էլեկտրոնային գնումների PPCM համակարգից, իսկ պատվիրատուի մասին տվյալները համակարգը պետք է վերցնի վերջինիս գրանցահաշվից:

Նախադիտման ժամանակ օգտատիրոջը պետք է առաջարկվի հրավեր-հայտարարության նախնական տարբերակը ֆայլային տեսքով: Օգտատերը առաջարկված տարբերակը փոխելու կամ շտկելու համար պահանջվող խմբագրումները պետք է անի համակարգում: Մինչև հրավերի հրապարակումը օգտատերը պետք է հնարավորություն ունենա նախադիտել հրավեր-հայտարարությունը և համակարգի միջոցով խմբագրել դինամիկ տեղեկատվությունը:

Ծառայության մատուցման ժամկետը՝

մինչև 2017 թվականի դեկտեմբերի 20-ը պետք է ՀՀ ֆինանսների նախարարությանը ներկայացվի գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված գործընթացների ուսումնասիրության արդյունքները և առաջարկվող մոտեցումները, ներառյալ գործառութային և տեխնիկական լուծումները: Ընդ որում, ՀՀ ֆինանսների նախարարությունը կներկայացնի իր դիրքորոշումը կամ կընդունի հաշվետվությունը 5 աշխատանքային օրվա ընթացքում:

աճուրդի հայտարարության և հրավերի ստեղծման ու հրապարակման գործընթացի ավտոմատացման համակարգը պետք է ՀՀ ֆինանսների նախարարությանը ներկայացվի

մինչև 2018 թվականի հունվարի 20-ը՝ ներառվելով էլեկտրոնային աճուրդի ծրագրային ապահովման մշակման նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության և «Ավռոմիկ» ՍՊԸ-ի միջև Պայմանագրի N 1 հավելվածի 4.1 կետով նախատեսված էլեկտրոնային աճուրդի համակարգի մեջ:

1.3 Պայմանագրի գումարն ամբողջությամբ Պատվիրատուն կփոխանցի Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար, եթե Կատարողը ներկայացնի կանխավճարի ապահովում՝ բանկային երաշխիքի ձևով: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

1.4 Պայմանագրի վճարման ժամանակացույցը խմբագրել համաձայն կից հավելվածի /կցվում է/:

## 2. Այլ պայմաններ

2.1. 13.09.2017թ կնքված N «ՀՀ ՖՆ-ԲՄԾՁԲ-17/1» ծածկագրով ծառայությունների մատուցման պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված են հայերեն լեզվով, երկու /2/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և տրվում են Կողմերին:

2.3 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
| --- | --- |
| ՀՀ ֆինանսների նախարարություն | «Ավռոմիկ» ՍՊԸ |
| ք. Երևան, Մ. Ադամյան 1 | ՀՀ, ք. Երևան, Դրոյի փ. 12 շենք, բն. 40 |
| ՀՎՀՀ՝ 02629081 | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900000903808 | Հ/Հ 2052222067111001 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | ՀՎՀՀ 00888275 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավար | Տնօրեն՝ |
| ------------------- Է. Գևորգյան | ------------------- Մ. Օհանյան |
| /ստորագրություն/ | (ստորագրություն |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված

13.09.2017թ կնքված N «ՀՀ ՖՆ-ԲՄԾՁԲ-17/1» ծածկագրով
պայմանագրում փոփոխություններ կատարելու նպատակով
<<_11_>> դեկտեմբեր 2017թ կնքված համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 72261110/1 | Էլեկտրոնային աճուրդի ծրագրային ապահովման մշակման ծառայություն | | | | | | | | | | | | 26280000 | 26280000 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մ. Ադամյան 1
ՀՎՀՀ՝ 02629081
Հ/Հ 900000903808
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավար
------------------------ Է. Գևորգյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
«Ավռոմիկ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Դրոյի փ. 12 շենք, բն. 40
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2052222067111001
ՀՎՀՀ 00888275
Տնօրեն՝
------------------------ Ա. Օհանյան
(ստորագրություն)
Կ.Տ